

– Եթէ այս մեր /254b/ վարդապետքն առնէյին, որքան ծանակէյիք զնոսա, որպէս որ այժմ բամպասէք վասն յերուսաղէմայ լուսոյն, որ ի ձէնջ աւանդութիւն է մնացեալ առ մեզ:

– Որպէս որ դեռեւս միշտ հանէք ամենայն տարուջ աւագ շաբթուն ի յամենայն եկեղեցիս ձեր զգեստաւորեալ անցուցանէք զամենայն ճրագարանս եկեղեցւոյն, յելանէք ի դուրս եւ փակէք զդուռն եկեղեցւոյն, նոր կրակ շինէք եւ օրհնէք զնայ եւ ապա թէ բանաք զդուռն եկեղեցւոյն եւ մտանէք ի ներս եւ ապա այն օրհնեալ հրօլին լուցանէք զմոմն եւ, ծունր յիջեալ, ասէք՝ Լումէ Քրիստի, որ թարգմանի՝ Լոյսն Քրիստոսի: Եւ այսպէս այն նոր ճրագէն լուցանէք զամենայն ճրագարանս եւ զկանդեղս եկեղեցւոյն:

– Ասայ ինձ, այտ ի՞նչ սահման է եւ կամ թէ օ՞վ սահմանեաց զսայ, ոչ ապաքէն դուք, ապա ուրեմն մի՞ք բամպասել զմեր վարդապետք, թէ ի յերուսաղէմ լոյս հանեն, ոչ թէ միայն դուք ներհակ էք մեր ամենայն բանին եւ մեր ամենայն արարողութեանն, այլ եւ մեր սուրբ եւ զ[ը]նտիրս արանցն ոչ համարիք սուրբ եւ ոչ զնահատակսն եւ զմարտիրոսն մեր:

Յորելեաններ յայտարարելու (մանրամասն տե՛ս **Fr. Gligora-Biagia Catanzaro, Anni Santi. I Giubilei dal 1300 al 2000. Città del Vaticano, 1996**): Կաթողիկէ եկեղեցում Յորելեանական տարուայ արարողութիւնների եւ Հռոմի Աշխատարար ուխտատեղիների մասին տե՛ս Ասաեւ Հռոմում հայ ուխտատարների համար հրատարակուած հետեւեալ աշխատութիւնները՝ ա) *Յորելեան Սուրբ տարի թողութեան, հոչակեցեալ ի Հայրապետէն արքայազանէ Բէնէտիքոսէ երեքսասան երորդէ. ի լեզուն հայոց եղեւ շարադրեցեալ աշխատութեամբ Յօնանու եպիսկոպոսին, Հռոմ, տպ. Ուրբանեան, 1725, ք*) *Նորագոյն ուղղեկցութիւն հրեշտակային հոօմէական եւ մշտատեւ, սակս այց առնելոյ զեկեղեցիս ի ներքս եւ ի արտաքս Հոսմայ, ուր հոչակին ուխտք եւ սօնախմբութիւնք: Եւ ի լեզու իտալիականէ ածանցեցեալ եւ շարադրեցեալ ի հայկական բարառն, աշխատութեամբ Թօխաթեցոց տեսուն Յօնանու վարդապետին եւ եպիսկոպոսին: Հռոմ, 1725:*

– Ընդէ՛ր յորժամ, որ Սուրխայն լագկոց տիրեց Շամախու⁷⁰, 75 հոգի ի հայոց սպաննեց, վասն քրիստոնէականի հաւատոյ: Գամք յերկուց դեռահաս մանկանցն: Այս մանկունքն յառաջմանէ գերեալք ի գիւղարէյիցն Շամախու եւ կային ի ծառայութեանն Սուրխային: Իբրեւ որ տիրեց Սուրխայն Շամախու /255a/ եւ հաստատեցաւ, այս մանկունքն խնդրեցին հրաման տեսանել զառկականս իւրեանց, որ եւ գնացին: Մինչ դարձան անտի, մատնեցան, թէ ոչ կան օրինօքն տաճկաց, մինչ ստուգեցաւ ի Սուրխայէն, թէ են հաստատ ի վերայ հաւատոյն Քրիստոսի, հրամայեաց սպանանել զնոսա: Զկնի վճռոյն ամենայն մեծամեծքն յարեան ի վերայ սոցայ: Ոմանք խրատէյին, ոմանք խոստանային փառք եւ մեծութիւն եւ ոմանք սպառնային տանջանք եւ զկնի բազում բանից ածին զնոսա ի հրապարակն քաղաքին: Անդ կայր պատրաստ պատրի ի Լութովիկոսն Պաշօտ⁷¹: Մինչ շոքեցուցին զմինն, վասն հատանելոյ զգլուխն, միւս յընկերն յորդորէր եւ ասէր նմայ՝ զնայ, էխպայր, զնայ, ահայ ես ալ գու գամ զկնի քոյ եւ հասանիմ քեզ: Զկնի կատարման սոցայ դարձաւ պատրին առ անդի եղեալ հայոցն, ասաց՝ շատ մարտիրոսաց պատմութիւն կարգացի, բայց ոչ լուա[յ] նման սոցա ջեր[մ]եռանդ մարտիրոս:

– Մինչ դեռ էյի ես ի Սպահան յաւուր միում, պատմեցի զայս գործ անդ եղեալ ճեզուիտ պատրոցն եւ հարցի, թէ՞ պատրի՛, դուք ի՞նչ ասէք վասն սոցայ: Պատասխանեց վանուց մեծաւորն եւ ասաց՝ հահ, նոցա համարել Աստուած մին տեղ է պատրաստել:

– Ոհ, զարհուրելի եւ սարսափելի կամապաշտութիւն. ոչ թէ միայն ոչ համարի մարտիրոս, այլեւ ոչ ասեն, թէ գնացին արքայութիւնն: Ընդէ՛ր, զի ոչ ծանեան զփափն եւ ոչ պաշտե-

70 Ծամախու 1721 թ. գրաման մանրամասն Ակարագրութիւնը տե՛ս Եսայի Հասան Զալալեանց, *Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի*, Երուսաղէմ, 1868, էջ 22-35:

71 Ծամախում գործող Արեւելահնդկական ընկերութեան գործակալ հոգեւորականներից: